

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 8-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻԶԵՎ «ԶԱՐԳԱՅՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ» ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՆԱՄԱՉԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

19 նոյեմբերի 2013թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դափարանը՝ կազմով. Գ. Նարոյթյունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Նովհաննիսյանի, Ն. Նազարյանի, Ա. Պեպրոսյանի, Վ. Պողոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Նանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Նայասարանի Նանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Ս. Կարայանի,

համաձայն Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դափարանի մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց դափարական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2013 թվականի նոյեմբերի 8-ին ստորագրված՝ Նայասարանի Նանրապետության եւ Միջազգային զարգացման ընկերակցության միջեւ «Զարգացման քաղաքականության առաջին ֆինանսավորում» ֆինանսավորման համաձայնագրում ամրագրված պարտավորու-

թյունների՝ Նայասպանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Նանրապետության Նախագահի՝ 13.11.2013թ. ՆՏ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Նանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով քննության առարկա համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Նամաձայնագիրն ստորագրվել է 2013 թվականի նոյեմբերի 8-ին՝ «Զարգացման քաղաքականության առաջին ֆինանսավորում» ծրագրի ներքո «Մրցունակության հզորացում» եւ «Ֆիսկալ, սոցիալական եւ բնապահպանական կայունության ամրապնդում» ուղղություններն իրականացնելու համար Նայասպանի Նանրապետությանը 41.000.000 (քառասունմեկ միլիոն) ԱՄՆ դոլարի չափով վարկ փրամադրելու նպատակով: Վարկի փակման ամսաթիվը 2014 թվականի մարտի 31-ն է:

2. Նամաձայնագրի բաղկացուցիչ մաս են կազմում երկու առդիր, մեկ հավելված եւ լրացուցիչ նամակ, որոնցով սահմանված են Ծրագրի գործողությունները, վարկի միջոցների հասանելիությունը, վարկի մարման ժամանակացույցն ու սահմանումները եւ ֆինանսական ու փնտեսական պայմանները:

3. Նամաձայնագրով Նայասպանի Նանրապետությունն սպանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- հայտնել Ծրագրի եւ դրա իրականացման նկատմամբ իր հանձնառության մասին,
- մյուս կողմի հետ կարծիքներ փոխանակել մակրոտնտեսական քաղաքականության դաշտի եւ Ծրագրի իրականացման առաջընթացի վերաբերյալ, ինչպես նաեւ մյուս կողմի քննարկմանն ու դիտարկմանը ներկայացնել Ծրագրի առաջընթացի մասին հաշվետվություն,
- մյուս կողմին անհապաղ տեղեկացնել ցանկացած այնպիսի իրավիճակի մասին, որը կարող է բացասական նյութական ազդեցություն ունենալ Ծրագրի նպատակների նկատմամբ,
- վարկի միջոցները չօգտագործել անընդունելի ծախսերի ֆինանսավորման համար,

- պահպանել վարկի շրջանակներում կատարված ծախսերը հավասարող բոլոր փաստաթղթերը վարկի փակման օրվանից երկու փարվա ընթացքում:

4. Նամաձայնագրով սահմանված են նաեւ վարկի գումարի մասհանման կարգն ու պայմանները, վարկի փակման ամսաթիվը, համաձայնագրում փոփոխություններ կատարելու, ինչպես նաեւ այն ուժի մեջ մտնելու կարգն ու պայմանները, որոնք համահունչ են միջազգային իրավական ակտերին ներկայացվող պահանջներին:

5. Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանը գտնում է, որ քննության առարկա ֆինանսավորման համաձայնագիրը բազմաբնույթ ծրագրային նպատակներից ելնելով պահանջում է համալիր վերահսկողություն՝ ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործման եւ ՆՏ սրանձնած միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարումն ապահովելու առումով:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասրանի Նանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2013 թվականի նոյեմբերի 8-ին ստորագրված՝ Նայասրանի Նանրապետության եւ Միջազգային զարգացման ընկերակցության միջեւ «Զարգացման քաղաքականության առաջին ֆինանսավորում» ֆինանսավորման համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապարասխանում են Նայասրանի Նանրապետության Սահմանադրությանը:

2. Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՆՈՂ

Գ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

19 նոյեմբերի 2013 թվականի
ՄԴՈ-1125